

Ծ Ա Ղ Ի Կ Ա Շ Ն Ա Յ Ն Ի



Անփառունակ մերոց մարգապ
Հուսկ գեղ եւ զարդ , հուսկ փայլ արծարծ .
Զի եւ ընդ քո խանդան պատկեր
Նըսեմ արփիք , շունչ ցըրտաբեր :
 Այսօր եւ վաղիւ
 Սըփռեացի քո շուք .
 Գայցէ երրորդ տիւ
 Եւ ահա սեաւ սուգ :

Ի մուտս աստեղըն գիշերոյ
Վարդափըթիթ յայգուն ծոցոյ .
Սպիտակափայլ շաղ մանրացօղ
Քեզ կայլակէր ի շիթ շող շող .
 Եւ դեռ վերամբարձ
 Գըլխոյդ վայրահակ
 Ի հիւս մարգարտաց
 Կապէր պայծառ թաղ :

Պըսակակիր զերդ արքայիկ
Ի քո դարպաս պըճնաղարդիկ ,
Զով զեփիւռից յառ քեւ նազանս
Խայտայիր դու ի գիրդ գըդուանս :
 Քեզ հաւիկն այգուն
 Եւ երեկորին ,
 Երգովք ոլորուն
 Գայր յայց կաթողին :

Ոչ եւս իջցէ շաղն այն շողուն
Պըսակաբեր քո ճակատուն :
Եղեամբն ցուրտ եւ ոտնորակ
Տարածեացի շուրջ ցիր համակ :
 Եւ հաւն այցելու
 Ի զուարթ քո ծըմակ ,

Ոչ դարձ առնուցու
ի պահան անուշակ :

Ոչ եւս ըզբո չըքնաղ պատկեր
Նըկատեսցես ի բիբըս մեր .
Իբր ի յըստակ ջինջ հայելի ,
Տախտակ գեղոյ քո սըխրալի :
 Ձի արտօսրածին՝
 Ի յոյզ թախծութեան ,
 Ահա մըթագնին
 Բիբը խոնաւական :

Խորթնանան թուխ արփիք զըւարթ .
Զարթնուն ապշոպք սպառնանըկատ .
Ծուփք սեաւ ամբոց ի լիւղ ծածան
Խաղան ընդ դաշտ եթերական :
 Եւ ցըրտաբեր շունչ
 Ամպոցն յանձաւաց ,
 Ի խոր թաւ մըռունչ
 Գայ սաւառնասլաց :

Ա՛ղէ թաքիր ծաղիկ սիրուն ,
Ժըմտից մերոց տունկ հովասուն .
Վաղաթարշամ քան դքեզ ծաղկանց՝
Մեզ դու աւանդ յիշատակաց :
 Սակայն ճախրանք սուր
 Ահա ցուրտ հողմոյն
 Պաշարեն անլուր .
 Եւ անկցիս տըմոյն :

Եւ քո դարպապք ծիծաղախիտ
Մերկեալ ըզգեղ՝ ըզփայլ վըճիտ ,
Յամայութիւն խըրթնատեսակ
Անապատաց դարձցին համակ :
 Ընդ որ դառնակոծ
 Սօսաւիւն եւեթ
 Յամաք տերեւոց
 Սըփռեսցի անհետ :

Ձորս մահաշունչ հողմն հարկանէ ,
Եւ թօթափին ցիր ետ զետէ .
Քեցեալ ըզթերթսըդ երփնագեղ
Թափ ընկենու յառուակն ի զեղ ,
Որ առ քեւ տըխուր
Դըդըջէ մընջիկ .
Կենընծայ քեզ ջուր
Բաժակեալ յուշիկ ,

Արդ հանդունակ դիաբարձիկ
Ըզդալկահար թերթդ ընկեցիկ ,
Յուս ժողովեալ թաւալ ալեաց
Վարէ տըրտում առեւզընաց :
Անցցես , ծածկեսցիս
Ո՛վ ծաղիկ եւ դու ,
Ընդ սահուն ալիս ,
Ընդ այդ ցուրտ առու .

Ընդ որ զերդ անց եւ նախածնող
Չուարթն Ապրիլէ՛լ ծաղկանց շողշող .
Չերդ անց Մայիս՝ ըզծաղկափայլ
Չիւր պատմութեանն մերկացեալ
Ըզգեղն ամենայն .
Եւ ի հետ նոցին
Կացեր դու միայն
Ժըմիտ մեր սըրտին :

Անփառունակ մերոց մարդաց
Հուսկ գեղ եւ զարդ , հուսկ փայլ արծարծ ,
Արդ եւ ըզքեզ ալիք առուին
Յալս անցելոյն բարձեալ տանին :
Եւ ծընցիս Յուսոյ
Յանդաստանս եւեթ ,
Ուր , ըզսերմըն քո
Արկեր կենսաւէտ :

Հ . Ա . Ե .